ԱՌԱՋԱԲԱՆ

Պատմահայր Մովսես Խորենացու հավաստմամբ, հնագույն ժամանակներում Գուգարաց աշխարհը եղել է Հայկ Նահապետի զարմից սերող Շարայի որդի Գուշարի տիրույթը: Տարածքի հնագիտական հետազոտությունները վկայում են, որ այստեղ կյանքը գոյատևել է քարեդարյան ժամանակներից ի վեր. քանի առկա էին նպաստավոր պայմաններ՝ Դեբեդի և Ձորագետի խորունկ կիրճերի դժվարամատչելի քարանձավային կացարաններ, զովասուն և առողջարար կլիմա, քաղցրահամ աղբյուրներ, ձկներով հարուստ գետակներ, պտղավետ անտառներ, վայրի անասնահոտեր, թռչունների երամներ ու ձիերի երամակներ, սիգավետ արոտավայրեր: Նոյեմբերյանում, Վանաձորում, Լոռի բերդում, Շնողում, Ախթալայում, Սանահնում, Շամլուղում, Օձունում, Յաղդանում, Ստեփանավանում և այլուր ի հայտ եկած քարե, փայտե, խեցե, ոսկրի և մետաղի իրերն ու առարկաները, բրոնզե արձանիկները, զարդերը, զենքերը, գործիքները, որոնք ունեն չորս հազար տարվա վաղեմություն, արտացոլում են տեղաբնակների առնչությունները Հայկական լեռնաշխարհի հետ, զբաղմունքը, սովորույթները, պատկերացումների համակարգը, ծիսական նախասիրությունները:[1] Բրոնզի և երկաթի բազմապիսի գտածոներն անսքող վկայում են ինչպես վաղ, այնպես էլ Արարատյան թագավորության կազմում ձեռք բերած մշակութային նվաճումներն ու դամբարանային ճարտարապետության բարձր մակարդակը, երկրագործության ու արհեստագործության վերելքը:

Գուգարքը հաղորդակցվել է նաև հելլենիստական մշակույթին, որը փաստվում է դամբարաններից մեկում գտնված մայր աստվածուհու քարե կիսանդրիով՝ այլ նութերի զուգադրությամբ:

Ստրաբոնի և Խորենացու հաղորդումների համաձայն, Վաղարշակ թագավորը (մ.թ.ա. 148-127 թթ.) Գուգարքում կազմակերպում է սահմանապահ բդեշխություն՝ Մեծ Հայքի 13-րդ նահանգի 9 գավառներով: Բավականին ընդարձակ այս միավորումը արևելքից սահմանակից էր Ուտիքին, արևմուտքից՝ Տայքին, հյուսիսից՝ Վիրքին և հարավից՝ Այրարատին: Ներկայումս Հայաստանի կազմի մեջ են այդ նահանգի 3 գավառները միայն՝ Տաշիրը, Ձորափորը և Կողբոփորը: Ստեփանավանի և Տաշիրի շրջաններն ընդգրկում են Վերին Տաշիրի սարահարթը, Գուգարքի և Սպիտակի վարչական միավորները՝ Փամբակի ցածրադիր հովիտը, Թումանյանը՝ Ձորագետը, Նոյեմբերյանը՝ Կողբոփորը: Վարչական այս բաժանումը պահպանվել է Արտաշեսյանների (մ.թ.ա. 189 – մ.թ. 1) և Արշակունիների (62-428 թթ.) օրոք, չնայած 387 թ. Հռոմի ու Պարսկաստանի միջև կնքված դաշնագրով կատարված մասնակի փոփոխություններին: Տարածքային ամբողջականությունը պահպանվեց նաև մարզպանական շրջանում, թեև քսանամյա պատերազմներից հետո 591 թ. պարսկա-բյուզանդական պայմանագրով մի կարճ ժամանակ ջլատվեց նահանգի միասնությունը:

---

[1] Խնդրի վերաբերյալ գիտական հարուստ տեղեկություններ կարելի է քաղել հնագետներ Ստեփան Եսայանի, Էմմա Խանզադյանի, Սեդա Դևեճյանի, Վարշամ Ավետյանի, անձավագետ Էդիկ Սարգսյանի աշխատություններից:

Շուրջ յոթ դար Գուգարքը[7] նշանակալի նպաստ է բերել երկրի քաղաքական ու տնտեսական կյանքին, ակտիվորեն մասնակցել է V դ. ազգային-ազատագրական շարժումներին: IV դարում քրիստոնեություն ընդունելից հետո, նահանգի ողջ տարածքում կառուցվում են նոր աղոթատներ, որոնցից պահպանվում են երեք կողմից սյունասրահներով ներփակված Տրմակաղաքաղաքն և Օձունի տաճարները, խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիները Դորբանդում, Արջվտում, Ոսկեպարում, որոնք ուրույն հետաքրքրություն են ներկայացնում IV-VII դդ. ոչ միայն հայկական ճարտարապետության անդաստանում:

Այս դարաշրջանից մեզ հասած քառանիստ կոթողները ևս բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում արվեստի պատմության ասպարեզում: Բուսական, երկրաչափական պատկերաքանդակներով ուշագրավ են Այգեհատի, Աքորու, Դսեղի, Արդվիի, Կողեսի, Կուրթանի, Հոբարծու կոթողները: Այս խմբում ճարտարապետական հորինվածքով և բազմաժանր նրբաքանդակներով առանձնանում են Օձունի և Բրդաձորի կոթողները:

Դավանական որոշակի խնդիրների բերումով Գուգարքում ևս IV-VII դդ. թևավոր խաչեր են կանգնեցվում՝ պատկերելով առանձնապես խաչելության և փրկագործության մոտիվը (Կողբ, Մղարթ), որոնց կիրառությունը պաշտամունքային, թե մեմորիալ նպատակով շարունակվեց նաև հետագայում (Մեծավան, Աղեգի, Մարց, Բերդավան), որոնք երբեմն կրում են նաև հիշատակագրություններ (Յաղդան, Կողես, Մղարթ, Քոբայր):

Գուգարքի տնտեսական ու շինարարական առաջընթացը կասեցվեց արաբական տիրապետության ընթացքում: Ճիշտ է, կաթողիկոս Հովհան Օձնեցին իր անբասիր հեղինակությամբ, իմաստնությամբ և դիվանագիտական խոհեմությամբ որոշ զիջումներ կորզեց խալիֆից, սակայն Յուսուֆի ասպատակիչները 902 և 911 թթ. ոտնակոխ արեցին նաև Գուգարաց աշխարհը: Ու, չնայած սրան, այստեղ վիճակը համեմատաբար տանելի էր, և արաբ ոստիկանների կողմից հետապնդվող Սմբատ Ա թագավորն (890-914 թթ.) ու կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին (898-929 թթ.) երբեմն ապաստանում էին Օձունում:

IX դարի կեսերին վերականգնված պետականությունն արագորեն խթանեց տնտեսության, առևտրի, արհեստների զարգացմանը, նպաստեց ազգային ոգու զարթոնքին, գիտության ու մշակույթի վերածնությանը: Վերընձյուղվեցին շինարարական ձեռնարկումները՝ հանդես բերելով ճարտարապետական ուշագրավ մտահղացումներ ու զարմանալի նորույթներ (առանց հենասյուների հսկայական գմբեթակիր տաճարներ, գավիթներ, բազմահարկ կառույցներ, հարդարանքի ճոխ տարրեր և այլն):

Կարևոր է մի հանգամանք ևս:

Կանխվեց նախարարական տների ու նրանց հպատակների VIII դարում ահագնացած արտագաղթը կայսրություն, և ակտիվացավ տարագիր հայերի վերադարձը հայրենիք: Արտաքին շարժառիթները գերագնահատողների կարծիքով, դա միաբնակ հայերի նկատմամբ Բյուզանդիայում ցուցաբերվող հալածանքի հետևանքն էր: Մինչդեռ հզորա-

---

[7] Հատկապես ձեռագրաց հիշատակարաններում նահանգը պարբերաբար կրում է Գուգարք, Գուգարաց աշխարհ, Տայք, Տայոց տուն, Խոր Հայոց, Ձորո գետ, Ձորագավառ, Ձորագետ, Տաշիր-Ձորագետ, Լոռե, Լոռի, Լոռի-Փամբակ, Բորչալու, Սևորդյաց երկիր և այլ անուններ:

ցող Բագրատունյաց Հայաստանը անդիմադիր ձգում էր օտար երկրներում դեգերող հայերին, որոնց հիշողության ծալքերում տակավին չէր մարել հայրենիքի տենչը, և նրանք տուն դարձան՝ իրենց վրա կրելով *հոռոմ* պիտակը, իսկ նրանց շինած աղոթարաններն էլ կոչվեցին Հոռոմոս, Հոռոմայր: Հոռոմներին է վերագրվել անգամ Սանահնի վանքի հիմնադրումը:

Գուգարքում ստեղծվում է իրավական յուրովի վիճակ այն բանից հետո, երբ երկրի հյուսիսային սահմաններն ամրապնդելու նպատակով Աշոտ Ողորմածը իր որդի Գուրգենին (պատմագրության մեջ հայտնի Կյուրիկեին) 970-ական թվականներին նշանակում է երկրամասի կառավարիչ, իսկ եղբայր Սմբատ Տիեզերակալը (977-990 թթ.) հատուկ հրովարտակով նրան հռչակում է նահանգի ժառանգական թագավոր, Սանահնի վանքն էլ՝ եպիսկոպոսանիստ հոգևոր կենտրոն (979 թ.): Նորաստեղծ Կյուրիկյան թագավորությունը չհասավ Գուգարաց բդեշխության ընդարձակությանը, սակայն, ժամանակագրի վկայությամբ, «Գուրգեն տիրէ Գոգարացւոց կողմանս սկսեալ ի Գագայ, Խառայ մինչեւ ի դուռն Տփղաց: Եւ վարեաց սա զամենայն ժամանակս թագաւորութեան իւրոյ յոքնապատիկ բարեպաշտութեամբ եւ անուանի եղեալ»:[3]

Կայուն և որոշակի սահմաններով կազմակերպված այս թագավորությունը նշանակալից հաջողության հասավ Դավիթ Անհողինի ավելի քան կեսդարյա տիրապետության ընթացքում (989-1048 թթ.): Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու պատմելով՝ նա մեծ հեղինակություն էր վայելում Անդրկովկասում, կանխում հաճախակի կրկնվող հարձակումները, ընդարձակում տիրույթների սահմանները Գանձակի ու Տփղիսի էմիրների գավթած հողերի հաշվին, իշխում Փառիսոսի, Գարդմանի, Կողբի, Քուստքի, Զավեի, Լոռի գավառների վրա, ամրացնում և բարեկարգում թագավորանիստ Շամշուլդեն ու 12 այլ բերդեր:[4]

1040 թ. Աբուլսուար ամիրան «Դառնաշունչ բարկութեամբ մտաւ յաշխարհն Աղուանից ի գաւառն Դաւթի Անհողին եւ բազում վիշտս էած հաւատացելոց»:[5]

Վտանգի ծանր հետևանքները քաջ գիտակցող պետական խոհեմ գործիչ Դավիթն արագորեն համախմբում է հայ-վրաց-աղվանական զորական ուժերը, դիմադարձ կանգնում թշնամուն և գլխովին ջախջախում նրա 150 հազարանոց բանակն ու ազատագրում գրաված հողերը:

Դավիթ Անհողինը որպես Բագրատունիների օրինական ժառանգորդ փորձեց պատվար կանգնել Հովհաննես-Սմբատի մահից հետո վտանգված Հայոց պետականությանը, այդպիսով նաև իր գերիշխանությունը տարածել Անիի թագավորության վրա: Բայց քաղաքական իրադրությունն աննպաստ էր նման ձեռնարկման հաջողության համար: Ու թեև «մերն դադարեաց թագաւորական գաւազանն», սակայն «գոյր ուրուք տէրութիւն, որպէս Կիւրիկէին, որ ի Լոռէ քաղաք, և որ շուրջ զնովաւ», տարեգրում է պատմիչը:[6]

Հորը փոխարինած Կյուրիկէ Ա (1048-1089 թթ.), որը «այր բարեբարոյ և կատարեալի գործս առաքինութեան»,[7] շարունակեց նրա որդեգրած քաղաքականությունը և մեծ

---

[3] Սանր ժամանակագրություններ, հ. II, կազմեց Վ.Ս. Հակոբյան, Եր., 1956. էջ 501:
[4] Հպաւքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 106:
[5] *Մատթէոս Ուռհայեցի*, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 79-80:
[6] *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն Հայոց, Եր., 1961, էջ 93:
[7] Նույն տեղում, էջ 152:

ջանքեր գործադրեց՝ երկրի տնտեսական զարգացման ընթացքը ապահովելու և ամրապնդելու պետության ռազմական կարողությունները: Նա ամրացրեց Լոռի բերդը, 1065 թ. այն դարձրեց Տաշիր-Զորագետի թագավորության մայրաքաղաքը, իսկ 1050 թ. կառուցեց Վարդաբլուր գյուղի ամրոցը: Այս ժամանակներից են նաև Կայծոն, Ղանլիջաբար, գուցե և՝ Չախկալաբերդ ամրոցները՝ բոլորն էլ կառուցված ժամանակի ռազմական պահանջներին համապատասխան:

XI դարի կեսերին սկսված սելջուկյան արշավանքները 1064 թ. հասան Հայաստան: Ալփասլանի հրամանների նվաճումներն ուղեկցվում էին կոտորածներով, թալանով, ավերածություններով, գերեվարությամբ և «ոչ ոք կարէ պատմել զկատարածն դառնաշունչ աղէտիցն հաւատացելոցն Քրիստոսի, վասն զի դառն ճաշակմամբ ընկալան զմահն ի կատաղեալ չարութենէ ազգէն թուրքաց»:[8]

Սակայն Ալփասլանը, նկատի ունենալով Լոռի բերդի ամրությունն ու Կյուրիկեի ռազմական ուժերը՝ վճռում է հարցերը լուծել դիվանագիտական ուղիով: Նա պատգամավոր է ուղարկում «առ թագաւորն ... Կիւրիկէ եւ խնդրեաց զդուստրն իւր ի կնութիւն»: Թագավորը խոհեմաբար նախընտրում է խուսափել արյունահեղությունից եւ դաշն է կնքում զոհավարի հետ՝ բավարարելով նրա պահանջները, փրկելով երկիրն ու ժողովրդին:[9]

Երկրի անդորրն ապահովելու, կեղեքումները, հալածանքները, ապօրինությունները կանխելու նպատակով Կյուրիկեն վրաց թագավոր Գեորգի Բ (1072-1089 թթ.) և Հայոց կաթողիկոսի ուղեկցությամբ 1081 թ. մեկնում է Խորասան՝ Մելիք-Շահի (1072-1092 թթ.) մոտ, որտեղից նրանք «դարձան պատուով»:

Կյուրիկեի հաջորդներ Դավիթ Բ և Աբասը Լոռիի թագավորությունը վարում են կիսանկախ վիճակով, իսկ 1118 թ. հայ-վրացական միացյալ ուժերն իսպառ ազատագրում են երկրամասը, որն անցնում է զորահրամանատար Օրբելյաններին, իսկ 1188 թ. Լոռի-Տաշիրը ճանաչվում է ամիրսպասալար Սարգիս Զաքարյանի ժառանգական կալվածքը: Այս ընթացքում դեռևս գոյատևում էր Կյուրիկյան թագավորությունը՝ զրկված նախկին փառքից, տիրույթներից ու իրավունքներից: Մասնավորաբար ծանրակշիռ էր Կյուրիկե Բ (1145-1186 թթ.) դերը, որի աղջիկներից Ռուսուդանն ամուսնացած էր Իվանե Օրբելյանի, իսկ Մամքանը՝ Խաչենի իշխան Հասանի հետ:

Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի դիտարկմամբ՝ «12-րդ դարում Տաշիր-Լոռին և Զորագետը խոշորագույն դեր կատարեցին հայկական կյանքում և նրանք դառան... Հայաստանի քաղաքական ու կուլտուրական վերածնության սիրտը»:[10]

Զաքարյանների գերակայությամբ հայկական ավատատիրական տների Օրբելյանների, Վահրամյանների, Արծրունիների, Մամիկոնյանների, Վաչուտյանների, Խաչենի իշխանների սերտ համագործակցությունը, խնամիական կապերը մեծապես նպաստեցին երկրի ամրապնդմանն ու բարգավաճմանը: Այդ դաշնակցությունը նպաստեց պետական միասնական քաղաքականության մշակմանն ու իրագործմանը, թշնամիների դեմ մղվող պայքարում ուժերի համախմբմանը, ներքին կարգուկանոնի, իրավական նորմերի, հարկապարտությային միասնական դրվածքի հաստատմանը: Ողջ երկրում ծավալվեցին շինարարական բուռն աշխատանքներ, բացվեցին բարձրագույն դպրոցներ, արտադրական, առևտրական կենտրոններ: Ավարտվում են Սանահնի, Հաղբատի, Գագա Ս. Սարգ-

---

[8] *Մատթէոս Ուռհայեցի*, էջ 145:
[9] Նույն տեղում, էջ 144-146:
[10] *Հակոբ Մանանդյան*, Երկեր, հ. Գ, Եր., 1977, էջ 80:

սի, Հոռոմայրի, Բարձրաքաշի, Խորակերտի, Քոբայրի, Ախթալայի, Հնեվանքի, Մշկավանքի շինարարությունները: Կառուցվում են Հաղբատի, Սանահնի, Ախթալայի, Քոբայրի կամարակապ քարաշեն սեղանատները, Կայան բերդը, Չախկալաբերդը, Լոռի բերդի, Յաղդանի, Կուրթանի, Չաղիձորի կամուրջները: Աներևակայելի նվաճումների հասավ Գուգարքի խաչքարագործությունը: Զարդաքանդակի նրբությամբ ու ճոխությամբ, հյուսվածքների ներդաշնակությամբ ու միասնությամբ, թեմատիկ բազմազանությամբ այս ստեղծագործությունները բխում էին ժամանակի դավանական պահանջներից, վերածնության գաղափարների առկայծումներից: Միջնադարյան քարաքանդակ արվեստի անհասանելի երևույթներ են Սանահնի, Հաղբատի, Դսեղի, Մարցի, Մշկավանքի, Իգահատի, Դովեղի խաչելության, համբարձման, ավետման տեսարաններով խաչքարերը՝ կարևոր արձանագրություններով: Երկրի անդորրն ապահովում էին Օրբելյան, Կյուրիկյան, Զաքարյան, Արծրունի փառապանց զորավարները, իսկ մտավոր-գիտական միտքն առաջ էին մղում Հովհան Օձնեցին, Դիոսկորոսը, Հովհաննես Իմաստասերը, Հովսեփ Գիտնականը, Անանիա Սանահնեցին, Դավիթ Քոբայրեցին, Վարդան Արևելցին, Գրիգոր Տուտեորդին, Գրիգոր Աբասորդին և ուրիշ լայնախոհ գիտնականներ ու վարդապետներ:

Պատմության անիվը բեկվեց մոնղոլական լայնածավալ նվաճումների հետևանքով: 1236 թ. Չարմաղանի առաջապահ ջոկատը Չաղատա նոյինի (բյուրապետ) գլխավորությամբ նվաճեց Գուգարքը: Գանձակեցին հաղորդում է, որ զորապետը, հրապուրված Լոռի քաղաքում թաքցված անհամար հարստությունների մասին տարածված զրույցներով, պաշարում է բերդը, ավերում պարիսպները, ներխուժում ամրոց և դաժանորեն կոտորում տղամարդկանց, կանանց ու երեխաներին, ավարառում նրանց ունեցվածքը և Շահնշահ Զաքարյանի գանձերը: Իսկ Կայան բերդում պատսպարված Ավագ Զաքարյանը կամովին հանձնվում է նվաճողին՝ խուսափելով արյունահեղությունից: Եվ չնայած ստեղծված աննպաստ իրադրությանը, այնուամենայնիվ, հետագա կես դարում շարունակվում են տնտեսական ու մշակութային առաջընթացը, շինարարական ծեռնարկումները Մշկավանքում, Հաղբատում, Քոբայրում, Դսեղում: Վիճակը վատթարացավ այն բանից հետո, երբ Արղունի որդի Ղազան խանի ժամանակ (1295-1304 թթ.) մոնղոլներն ընդունեցին մահմեդականություն՝ հիմնովին փոխելով իրենց երբեմնի զիջողամիտ վերաբերմունքը նվաճված քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Իսկ թաթարական լայնածավալ պետության կործանումից հետո (1353 թ.) տիրող անիշխանության, թուրքական ցեղերի մրցակցության հետևանքով հետզհետե հյուծվում է նաև Գուգարքը:

1430 թ. Լենկ Թեմուրի որդի Շահռուխը գրավում է Տաշիր-Զորագետը և նրա կենտրոն՝ կիսավեր ու անպաշտպան Լոռի բերդը: Երկու տարի անց հայ-վրացական ուժերը ազատագրում են գավառը,[11] բայց այլևս երբեք կայուն վիճակ չի ստեղծվում:

Ծանրագույն այս ժամանակներում Լոռին կրկին անցնում է Օրբելյաններին: 1438 թ. Լոռու պարոն է հիշվում «մեծափառ եւ աստուածաշեն իշխանաց իշխան»[12] Բեշքենը՝ Բուրթել Օրբելյանի ծոռը, որի մասին տեղեկացնում է նաև Լոռի բերդի մի խաչքարի արձանագրություն:

Չդադարող հարձակումներին դիմադարձ կանգնելու նպատակով թեև ամրացվում են Գուգարքի ռազմական կարևոր հանգույցները, այդ թվում Լոռի բերդը, սակայն 1469 թ.

---

[11] *Լ.Մ. Մելիքսեթ-Բեկ*, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Եր., 1955, էջ 54:
[12] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Եր.,1955, էջ 486:

թուրքերը գրավում են այն: Դանդում գրված Ավետարանի հիշատակարանի համաձայն, 1491 թ. հայ-վրացական ուժերը ջախջախում են թուրքերին և ետ խլում ամրոցը:

1555 թ. թուրք-պարսկական պայմանագրով Լոռի-Փամբակում հաստատվում է պարսիկների գերիշխանությունը, բայց ամրոցը հաճախակի անցնում է ձեռքից-ձեռք, որով գավառի վրա հաստատվում է տվյալ պետության գերակայությունը: 1603 թ. Շահ Աբասը վերանվաճում է Լոռի-Փամբակը և այստեղ բնակեցնում թուրքական մի ցեղի, որի անունով գավառը վերանվանվում է Բորչալու: 1666 թ. դաշնագրով տարածքային պատկանելությունը մնում է անփոփոխ, սակայն այնուհետև շարունակվում են պարսկա-օսմանյան երկարամյա մրցակցությունը, ջալալիների ու լեզգիների ավարառությունները, որոնց հետևանքով սնանկանում է անապաշտպան ժողովուրդը: 1785 թ. Լոռի է ներխուժում Օմար խանի դաղստանյան 20-հազարանոց բանակը, 1795 թ.՝ Աղա Մահմեդի զորքերը:

Վերջին դարերի անիշխանության, անտերության հետևանքով նոսրանում է Գուգարքի բնակչությունը, դադարում են շինարարական աշխատանքները, ավերվում ու լքվում են հոգևոր կենտրոնները, իսկ եղած վիմագիր արձանագրություններն այլևս պատմական սակավ կարևորություն են ներկայացնում:

* * *

Գուգարքի հին և միջնադարյան հուշարձանների թիվն անցնում է 10 հազարից: Թեև անհամեմատ քիչ են վիմագիր արձանագրությունները, սակայն դրանք չափազանց կարևոր տեղեկություններ են պարունակում միջնադարյան Հայաստանի քաղաքական կացության, տնտեսական, սոցիալական, իրավական հարաբերությունների, Բագրատունյաց, Կյուրիկյան հարստությունների, Զաքարյան, Արծրունյաց, Մամիկոնյան ավատական տների, ուշ դարերում այս տարածք ներթափանցած Շահնազարյանների ու մանր այլ իշխանապետությունների գործունեության մասին:

Առանձնահատուկ կարևորություն ունեն վարչակառավարչական համակարգի, հարկապարտությային դրվածքի, նվիրատուների և միաբանությունների պայմանագրությունների վերաբերյալ մեզ հասած վավերագրերը՝ որպիսի մի այլ սկզբնաղբյուր հազիվ թե կարելի է ակնկալել: Այս առումով ուշագրավ են *աբգանի* մասին XIII-XIV դդ. Զաքարյանների, Մամիկոնյանների կողմից գրանցված վիմագիր իրավավճիռները: Պարզվում է, որ հայ իշխանները պետական միասնական քաղաքականություն էին վարում՝ գյուղերի քայքայումը, բնակչության ընդվզումը, արտագաղթը կանխելու նպատակով այլևայլ հարկերի ու պարտագրերի հետ զիջելով այն ժամանակներում ևս բավականին ծանր համարվող ջրահարկը:

Գուգարքի վիմագրերը տեղագիր հեղինակների, հնասերների, բանասերների, պատմաբանների ուշադրությանն են արժանացել դեռևս XVII դարում, երբ Սանահնի և Հաղբատի մի շարք արձանագրություններ մտցվել են «Քոթուկի» մեջ: Բազալտ քարի վրա փորագրված, բայց դարերի ընթացքում հողմահարվող վավերագրերի առաջին ժողովածուն կազմել է Հովհաննես Ղրիմեցին 1827 թ.: Այնուհետև հանդես եկան թեմական առաջնորդներ Սարգիս Ջալալյանցի, Մակար Բարխուդարյանցի, Քաջբերունու (Գաբրիել Հովհաննիսյան), Իսահակ Հարությունյանի, Ռոստոմ բեկ Երզնկյանի, Երվանդ Լա-

լայանի. Գյուտ Աղանյանցի և այլոց գրքերը, հոդվածներն ու նոթագրությունները: Այս հեղինակների հիմնական թերությունն այն է, որ նրանք բնագրերը արտագրել են անփույթ, հատուկ ընտրությամբ, ունեն բացթողումներ, աղավաղումներ, հավելումներ ու կրճատումներ, տպարանային ազատ շարվածքով հրատարակված բնագրերը չունեն լուսանկարներ, գրչագրեր, անտեսված են կցագրերը, համառոտագրության նշանները, և հնարավոր չէ երկմտության դեպքում ստուգել նրանց համապատասխանությունը բնագրերի հետ:

Սակայն դժվարին ու կարևոր գործ էր սկսված:

Իրերի բերումով Գուգարքի վիմագրերից հրատարակել են նաև Լևոն Մելիքսեթ-Բեկը, Գարեգին Հովսեփյանը, Սեդրակ Բարխուդարյանը, Սուրեն Ավագյանը, Գեղամ Սարգսյանը, Լավրենտի Բարսեղյանը, Արամ Քալանթարյանը, Աբրահամ Շահինյանը, Գրիգոր Կարախանյանը, Ալեքսանդր Մանուչարյանը և այլք:

Գուգարքի վիմագրական հսկայական ժառանգության գիտական լիարժեք ուսումնասիրության դրոշակակիրը անվանի հնագետ-պատմաբան, պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանն է: Սանահնի և Հաղբատի վանքերին նվիրված նրա ծանրակշիռ մենագրությունները՝ նյութի ընդգրկումով, սպառիչ վերծանություններով, պատմաքննական մեկնաբանություններով, ճարտարապետական վերլուծություններով, մնում են անմրցակից:

Հայագիտության ասպարեզում հայտնի է Կարապետ Կոստանյանցի կազմած «Վիմական տարեգիր» ժողովածուն (Ս. Պետերբուրգ, 1913)՝ նյութերը քաղված մինչև այդ եղած հրատարակություններից, շատ դեպքերում՝ անհարկի միջամտություններով, կրճատումներով ու սրբագրումներով, բայց՝ գնահատելի իբրև հայ վիմագրության «Դիվանի» առաջին փորձ:

Համանման մի հավաքածու էլ կազմել է Մխիթարյան ուխտի անդամ, դոկտոր Հ. Ոսկյանը («Գուգարքի վանքերը», Վիեննա, 1960): Նա անտեղյակ է Հայոց վանքեր տանող ճանապարհներից և տեղեկատվությունները հավաքել է Ջալալյանցի, Լալայանի, Հովսեփյանի, Ղաֆադարյանի, Սարգսյանի աշխատություններից, հայագիտական հանդեսներից, ուստի անփոփոխ, առանց որևէ մեկնաբանության արտագրված նյութերը գիտական արժեք չեն ներկայացնում:

Գուգարքում կան նաև այլալեզու՝ հունարեն, արաբերեն, ռուսերեն արձանագրություններ: Մեծ թիվ են կազմում և պատմական որոշակի կարևորություն ունեն վրացական վիմագրերը: Նկատենք, որ Հայաստանում գոյություն ունեցող վրացերեն վիմագրերի գերակշիռ մասը գտնվում է Լոռիում (Քոբայր, Հնեվանք, Ախթալա և այլն): Դրանք խնամքով ժողովել և գիտական հավաստիությամբ վերծանել, մեկնաբանել է Պարույր Մուրադյանը: Այս կարևոր սկզբնաղբյուրից օգտվող հայագետների գործը դյուրացնելու նպատակով՝ նա դրանք հմտորեն թարգմանել է հայերեն:

«Դիվան հայ վիմագրության» սույն պրակում ամփոփված են Հայաստանի հյուսիսարևմտյան երկրամասի՝ պատմական Գուգարաց աշխարհի, ներկա Լոռու մարզի Թումանյանի, Գուգարքի, Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի և Տավուշի մարզի Նոյեմբերյանի ենթաշրջանների ճարտարապետական շինությունների որմերի ու հուշագրական կոթողների (խաչքարեր, տապանաքարեր) արձանագրությունները: Դրանցից հնագույնները VI դարից մեզ հասած պատառիկներ են (Օձուն, Արջովիտ, Կողբ), իսկ հոծ խմբերը վերաբերում են X-XIV դարերին:

Պրակը կազմված է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմա-

գրության բաժնում: Նյութերը ժողովվել են մեծ երախտավոր Սեդրակ Բարխուդարյանի ղեկավարությամբ 1965-1967թթ. կազմակերպված արշավախմբերի ջանքերով, որոնց մասնակցել են Ս. Ավագյանը, Գր. Գրիգորյանը, Ա. Շահինյանը, Ալ. Մանուչարյանը: Ս. Բարխուդարյանի մահվան պատճառով անավարտ մնացած գործը ամբողջացնելու նպատակով 1976-1978, 1998-1999թթ. բաժնի աշխատակիցներ Ալ. Մանուչարյանը, Գր. Գրիգորյանը, Գ. Սարգսյանը, Աշ. Մանուչարյանը և Ռ. Գասպարյանը վերստին շրջել են տվյալ շրջաններում, հավաքել և ճշգրտել մի շարք արձանագրություններ:

Սանահնի և Հաղբատի վիմական արձանագրությունները ներմուծվել են պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի մենագրություններից՝ դրանք համապատասխանեցնելով «Դիվանի» սկզբունքներին, իսկ կատարված որոշ միջամտությունները, լրացումները նշված են ըստ հարկի:

«Պրակում» ընդգրկված են վիմագիր տեքստեր, որոնք բանասիրությանն են ներկայացվում առաջին անգամ:

«Պրակում» զետեղված լուսանկարները կատարել են Արտաշես Վրույրը և Ալ. Մանուչարյանը, իսկ գրչագիր ընդօրինակությունները՝ Ն. Խանզադյանը, Լ. Ավագյանը և Գ. Սարգսյանը:

Բազմաթիվ լուսանկարներ տրամադրել է Ս. Սաղումյանը, մի քանիսը՝ Ա. Քալանթարյանը (խմբ.):